ՀՏԴ 941(479.243)

Պատմություն

Հարություն ՄԱՐՈՒԹՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, պ.գ.դ.,
E-mail: agmidirector@genocide-museum.am ; hmarutyan@yahoo.com

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ[1]

Հոդվածում քննվում է ԽՍՀՄ սահմանադրության դերն ու նշանակությունը, սահմանադրությամբ ընձեռված հնարավորությունների օգտագործման կերպը, սահմանադրության քննադատության ու որակումների բովանդակային վերլուծությունը և դրա արտացոլումը Ղարաբաղյան շարժման պատկերագրության մեջ: Սահմանադրության թեմային վերաբերող ցուցապաստառային տեքստերը նաև վկայությունն են այն բանի, որ Ղարաբաղյան շարժումն իր առջև դրված խնդիրների որոշ մասով համահունչ էր ժողովրդավարական վերափոխումներին ուղղված ընդհանուր խորհրդային բողոքի դրսևորումների: Դրանք յուրովի ձևով քաղաքականապես կրթում էին Շարժման մասնակիցներին, առաջարկում նոր համոզմունքներ, իրականացնում անբռնազբոս քարոզչություն, ձևավորում աշխարհայացքային նոր տարրեր, հանում մարդկանց միջից խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված վախը, մղում համարձակ քայլերի:

Բանալի բառեր՝ ԽՍՀՄ սահմանադրություն, Ղարաբաղյան շարժում, ցուցապաստառներ, Գերագույն խորհուրդ, ազգերի ինքնորոշում, ժողովրդավարություն:

---

[1] *Հոդվածը զեկուցման ձևով ներեկայացվել է Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովում (20 սեպտեմբերի 2021 թ.): Հոդվածի ընդարձակ տարբերակը տե՛ս. Հարություն Մարության, «Սահմանադրական պայքարը Հայաստանի անկախացման ճանապարհին. Սահմանադրության մասին պատկերացումները, ընկալումները, գնահատականները Ղարաբաղյան շարժման տարիներին», «Սահմանադրական մշակույթի արժեբանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» (խմբ. Գագիկ Հարությունյան, Արտակ Մովսիսյան, Տեր Արարատ քահանա Պողոսյան), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 643-680:*

А. МАРУТЯН

ТЕМА КОНСТИТУЦИИ В ИКОНОГРАФИИ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ

В статье рассматривается роль и значение Конституции СССР, способ использования возможностей, предоставленных конституцией, анализ содержания критики и характеристики конституции и его отражение в иконографии Карабахского движения. Транспарантные тексты, относящиеся к теме конституции, являются также свидетельством того, что Карабахское движение по поставленным перед собой задачам в определенной части было созвучно проявлениям общесоветских протестов, направленных на демократические преобразования. Эти транспаранты и плакаты своеобразно воспитывали участников Движения, предлагали новые убеждения, осуществляли непринужденную пропаганду, создавали новые элементы мировоззрения, выдавливали из людей страх, сформированный за десятилетия советский власти, побуждали к смелым действиям.

Ключевые слова: Конституция СССР, Карабахское движение, транспаранты и плакаты, Верховный совет, самоопределение наций, демократия.

H. MARUTYAN

THE THEME OF CONSTITUTION IN THE ICONOGRAPHY OF KARABAGH MOVEMENT

The article examines the role and significance of the Constitution of the USSR; the way to use the opportunities provided by the Constitution; analysis of the content of criticism and characteristics of the Constitution; and its reflection in the iconography of the Karabakh Movement. Posters' and banners' texts related to the subject of the Constitution are also evidence that the Karabakh Movement, in terms of its tasks, was in a certain part consonant with the manifestations of all-Soviet protests aimed at democratic transformations. These banners and posters in a peculiar way brought up the participants of the Movement, offered new convictions, carried out unconstrained propaganda, created new elements of the worldview, squeezed out of people the fear formed over the decades of Soviet power, prompted them to take bold actions.

Key words: USSR Constitution, Karabagh Movement, posters and banners, Supreme Council, self-determination of peoples, democracy.

Ղարաբաղյան շարժումը (1988 թ. փետրվար – 1990 թ. օգոստոս) սկսվեց որպես իրավական խնդրի բարձրաձայնում և հարցը իրավական հարթության մեջ լուծելու պահանջ: Շարժման քննությունը ցույց է տալիս, որ ղարաբաղյան պրոբլեմը, լինելով Շարժման քաղաքական գերխնդիր, հաճախ լոկ հետնախորք էր ծառայում հայաստանյան հասարակությանը հուզող շատ այլ կենսական խնդիրների վերհանման և լուծման ուղիների որոնման հարցում: Դրանցում կարելի է նկատել միմյանց զուգահեռ, իրար մեջ սերտաճած ընթացող երկու հիմնական ուղղություններ՝ ազգային-ազատագրական պայքարի և ժողովրդավարական

վերափոխումների իրականացման: Աստիճանաբար պարզ էր դառնում, որ ազգային-ազատագրական պայքարի, ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հաջողությունը կարող է պայմանավորված լինել միայն ժողովրդավարական վերափոխումների ճանապարհին ունենալիք ձեռքբերումներով:

«Ժողովրդավարական վերափոխումներ» ձևակերպումը սովորաբար ընկալվում է որպես երկրի օրենսդիր մարմնի ընդունած օրենքների ու որոշումների հիման վրա պետության գործադիր մարմինների, այլ կերպ ասած՝ «վերևների» կողմից իրականացվող բարեփոխումներ: Սակայն երբ ճնշումը գալիս է ներքևից, և այն իր արմատականությամբ չի համապատասխանում «վերևների» պլաններին, նկարագրված սխեման չի գործում կամ աշխատում է խիստ դանդաղ, իշխանությունների որոշումներն էլ ընկալվում են որպես թերի, անբավարար: Եվ այդ վերափոխումները՝ որպես գործընթաց, տեղ են գտնում մարդկանց մտքերում, տարբեր կերպ ներկայացված պահանջներում և գործողություններում: Ընդ որում, դրանք չեն կորցնում իրենց արմատականությունը, շարունակում են ուղղորդել մարդկանց, դառնում նրանց ակտիվ քաղաքացիական պահվածքի հիմքը: Ժամանակ անց, երբ արմատական փոփոխություններն արդեն տեղ են գտնում երկրի՛ օրենսդիր և գործադիր մարմիններում, նախկին պահանջներն սկսում են աստիճանաբար կենսագործվել արդեն ա՛յդ մարմինների որոշումների արդ-յունքում: Այնպես չէ, որ ի վերջո ստեղծվում է իդեալական վիճակ, սակայն այստեղ կարևորն այն է, որ տեղ է գտնում գործընթաց, որի ժամանակ փոխվում են մարդիկ, փոխվում է երկիրը:

***

Այս գործընթացը շատ լավ է երևում Շարժման պատկերագրության վերլուծության շնորհիվ: Ընդհանրապես, մարդկային գործունեության տարբեր բնագավառներում պատկերների միջոցով տեղեկատվության, հիշողության գրանցման, պահպանման ու փոխանցման միջոցը հայտնի է հնուց անտի, եղել է բավականին արդյունավետ և գործածական է մինչ օրս:

Ղարաբաղյան շարժման ընթացքում ստեղծված պատկերների ու գրավոր բանաձևերի՝ ցուցապաստառների յուրահատկությունն այն է, որ դրանց ճնշող մեծամասնությունը ոչ այնքան առանձին կուսակցությունների կամ քաղաքական հոսանքների ծրագրային դրույթներն էր արտահայտում, որքան հաղորդում էր ժողովրդի մտահոգությունները, տրամադրությունները, ցանկությունները, այս կամ այն իրադարձության գնահատականը և այլն: Եթե խորհրդային տարիների ցուցապաստառները կրում էին իշխող կուսակցության գաղափարախոսական դրոշմը, խիստ կանոնակարգված բնույթի էին, բացառում էին որևէ շեղում, ապա Շարժման ցուցապաստառները ժանրային ամենատարբեր դրսևորումներ ունեին, աչքի էին ընկնում բովանդակային բազմազանությամբ, կառուցված էին ինչպես ազգայնական, նույնպես և խորհրդային մտածողության հենքի վրա, մի խոսքով՝ ժողովրդական պատկերագրական բնույթ կրող ազատ մտածելակերպի չմիջնորդավորված ցուցիչներ էին:

*

Ղարաբաղյան շարժման կարևորագույն ձեռքբերումներից էր Խորհրդային Միության սահմանադրության արժեքի գիտակցումը, սահմանադրությամբ ընձեռված հնարավորությունների մասին գիտելիքի աննախադեպ աճը: Եթե մինչ Շարժումը սահմանադրությունն ընկալվում էր իբրև թղթի մի անպետք կտոր, իսկ Գերագույն խորհուրդը դիտվում էր իբրև մի վայր, որտեղ բոլոր պատգամավորները լոկ ձևական բնույթ ունեցող քննարկումներով ու միաձայն կողմ էին քվեարկում վերևից իջեցվող օրենքների նախագծերին, ապա Շարժման տարիներին մարդիկ աստիճանաբար սովորեցին նաև գնահատել գործող օրենքները, Գերագույն խորհուրդը սկսեց դիտվել իբրև մի վայր, որի որոշումներում պետք է դրսևորվի ժողովրդի կամքը[1], իսկ պատգամավորները պարտավոր են ի պաշտոնե լսելի դարձնել այդ կամքը: Ստեղծվեցին «սահմանադրական» կոչվող հատուկ խմբեր, որոնք համակարգում էին պատգամավորների հետ տարվող աշխատանքները:

Ղարաբաղյան շարժման կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն էր, որ այն սկզբից մինչև վերջ իր բնույթով սահմանադրական պայքարի օրինակ էր: Հարցն այն է, թե ի՞նչ առիթներով էին մարդիկ դիմում սահմանադրությանը, ի՞նչ վերաբերմունք կար և ի՞նչ որակումներ էին տալիս այդ հիմնարար փաստաթղթին, ինչպիսի՞ սահմանադրական թեմաներ էին արծարծում, ինչպե՞ս և ինչու՞ էր այն քննադատվում, ի՞նչ կերպ էր դա դրսևորվում Շարժման պատկերագրության մեջ:

ԽՍՀՄ սահմանադրության համաձայն (հոդված 2), «ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին», որն էլ «պետական իշխանությունն իրականացնում է ժողովրդական դեպուտատների սովետների միջոցով, որոնք ՍՍՀՄ քաղաքական հիմքն են: Մյուս բոլոր պետական մարմինները ենթակա են ժողովրդական դեպուտատների սովետների վերահսկողությանը և հաշվետու են նրանց»:

ԽՍՀՄ-ը բազմազգ և բազմէթնիկ երկիր էր, միավորում էր բազմաթիվ ժողովուրդների, սակայն երկրի սահմանադրության 174 հոդվածներից միայն մեկում՝ 70-րդում էր, որ օգտագործվում էր «ազգերի ազատ ինքնորոշում» ձևակերպումը: Այդտեղ նշված էր, որ ԽՍՀՄ-ը «միասնական միութենական բազմազգ պետություն է՝ կազմավորված սոցիալիստական ֆեդերալիզմի սկզբունքի հիման վրա՝ ազգերի ազատ ինքնորոշման և իրավահավասար սովետական սոցիալիստական հանրապետությունների կամավոր միավորման հետևանքով» :

---

[1] *Սրա յուրօրինակ դրսևորումներից էր «Գերագույն իշխանությունը ժողովրդի կամքն է» տրանսպարանտը, որն «իշխում էր» Օպերայի հրապարակում 1988 թ. աշնանը (լուս. 1): Տրանսպարանտային տեքստի ձևակերպումը թերևս քաղված է Հայոց համազգային շարժման ծրագրի մաս կազմող Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքներից (կետ 2), որտեղ նշված է, որ «պետական կազմավորման Գերագույն իշխանությունը ժողովրդի կամքն է՝ արտահայտված համաժողովրդական հանրաքվեներով կամ ազատ ընտրություններով ստեղծված ներկայացուցչական խորհրդարանի վճիռներով»:*

ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշման մեջ, ինչ-ինչ հաշվարկներից ելնելով (թերևս, ենթադրելով, որ ավելի նպատակահարմար է հարցը ներկայացնել լոկ որպես սահմանադրության 78-րդ հոդվածով ենթադրվող տարածքային խնդիր, որպիսիք եղել են ԽՍՀՄ պատմության ընթացքում և լուծվել են կենտրոնական իշխանությունների կամային որոշմամբ), ոչինչ չէր ասվում ազգերի ինքնորոշման իրավունքի մասին[1]: Սակայն աստիճանաբար հայաստանյան իրականության մեջ սկսեց առաջին պլան մղվել հենց ա՛յդ սկզբունքի կարևորությունը, ինչը նաև հնարավորություն էր ընձեռում հենվել երկրի սահմանադրության 70-րդ հոդվածին: Ա՛յս կերպ էր, որ հարցը երկրի ղեկավարության «ուզել-չուզելու» ոլորտից տեղափոխվում էր այլ, սակայն կրկին սահմանադրական դաշտ:

Պետք է նաև նկատել, որ Լեռնային Ղարաբաղի հայության՝ մինչև 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը ձեռնարկած քայլերն (տասնյակ հազարավոր ստորագրություններով դիմումները երկրի կենտրոնական իշխանություններին, երեք պատգամավորությունների մեկնումը Մոսկվա, ԼՂԻՄ շրջանային խորհուրդների գործկոմների որոշումները) իրենց բնույթով արդեն իսկ ինքնորոշման իրավունքի կենսագործման դրսևորումներ էին, առանց սակայն այդ հիմնարար ձևակերպմանը հղում տալու:

Փետրվարյան հանրահավաքներից մեզ հայտնի է նման շեշտադրմամբ երկու ցուցապաստառ: Մեկին գրված է «*Требуем самоопределения* [շարունակությունը մեկ բառ է, սակայն չի երևում: Կարելի է ենթադրել, որ «*Карабаха*» բառն է]» (լուս. 2): Երկրորդին գրված է «*Самоопределение – не экстремизм*» (լուս. 3) և վստահաբար մեջտեղ է եկել փետրվարի 24-25-ին: Բանն այն է, որ ԽՄԿԿ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Վ. Ի. Դոլգիխը և ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ա. Ի. Լուկյանովը փետրվարյան ցույցերի առիթով ժամանել էին Երևան: Վ. Ի. Դոլգիխը փետրվարի 24-ին Հայկական հեռուստատեսությամբ ելույթ ունենալիս Օպերայի հրապարակում հարյուր հազարանոց հանրահավաքների մասնակիցներին բնութագրեց որպես «группа людей»[2], իսկ փետրվարի 24-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «Իզվեստիա» թերթում, ապա փետրվարի 25-ին ԽՄԿԿ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթում տպագրված հաղորդագրության մեջ խաղաղ ցույցերի մասնակիցները որակվեցին «экстремистски настроенные лица»[3]: Նույն ոգով էին տոգորված նաև Կենտրոնական հեռուստատեսության լրատվական ծրագրի՝

---

[1] Դրա մասին խոսք չի եղել նաև 1988 թ. մարտի 17-ի «Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումի» որոշման մեջ, Ադրբեջանի, ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհուրդների նախագահությանը, պատգամավորներին Լեռնային Ղարաբաղի տարբեր մակարդակի 119 պատգամավորների 1988 թ. մայիսի 20-ի և ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյին ԼՂ մարզկոմի բյուրոյի և մարզի գործկոմի 1988 թ. մայիսի 27-ի դիմումների մեջ: Եվ միայն հունիսի 21-ին գումարված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 12-րդ գումարման արտահերթ նստաշրջանի ընդունված որոշման մեջ երկու անգամ շեշտվում է «ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքի» կարևորությունը: :

[2] Տե՛ս «Սովետական Հայաստան» (օրաթերթ), 25 փետրվարի, 1988 թ.:

[3] Նույն տեղում:

«Ժամանակ»-ի հաղորդագրությունները: Նման որակումները հաջորդել էին ԽՄԿԿ ԿԿ-ի փետրվարի 21-ի որոշման մեջ առկա գնահատականին, որտեղ ասվում էր, որ «գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի փոփոխմանն ուղղված պահանջներն ու գործողությունները հակասում են Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ աշխատավորության շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին»:

Այն դեպքում, երբ ցայդ «էքստրեմիստ/ծայրահեղական» որակումը խորհրդային քարոզչությունը գործածում էր ագրեսիվ տրամադրված ամբոխի կամ անկարգություններ հրահրողների ու դրանց մասնակիցների նկատմամբ (այն էլ միայն Արևմուտքի այս կամ այն երկրից հաղորդագրություններ հեռարձակելիս), հանկարծ այդպես բնութագրվեցին խաղաղ, առանց բռնության որևէ նշույլի անցկացվող հանրահավաքները, որոնք ուղղված էին բարեփոխումների կուրսի շրջանակներում իրականացվող, զուտ իրավական բնույթ ունեցող խնդրի լուծմանը: Մարդիկ միանգամայն համոզված էին, որ սխալ է տեղի ունեցել: Բողոքի ցույցերը Օպերայի հրապարակում ավելի մեծ թափ առան, դրանք եղան նաև Մամուլի տան մոտ: Մարդկանց ձեռքերին նաև հետևյալ բովանդակությամբ ցուցապաստառներ էին. «*Весь народ не может быть экстремистами*», «*Армяне не экстремисты! Экстремисты не мы*» (նկ. 4), «*Народ не группа*», «*Мы не группа, мы народ!*» (նկ. 2):

Կարելի է ենթադրել, որ այն գիտակցումը, որ Լեռնային Ղարաբաղի հայությունն ինքնորոշվել է, առկա էր հանրահավաքների մասնակիցներից շատերի մեջ, սակայն այդ գիտակցումը իր հետևից չէր բերում սահմանադրական պայքարի շարունակությունը «ազգերի ազատ ինքնորոշման» իրավունքի սահմանադրական սկզբունքի առաջ քաշման և կենսագործման հետ փոխկապակցելուն:

Հարցն առաջին անգամ նման տեսանկյունից բարձրաձայնվեց «Ղարաբաղ» շարժման կազմկոմիտեի[1] 1988 թ. մարտի 19-ի թռուցիկում՝ վերնագրված «Մեր քաղաքական սկզբունքները» (հեղինակ՝ Վազգեն Մանուկյան): Այս ութ կետանոց փաստաթղթի երկրորդ կետում գրված էր. «Շարժման նպատակն է՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա և առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ, հասնել ԼՂԻՄ-ի բնակչության օրինական պահանջի բավարարմանը»[2]:

---

[1] *1988 թ. մայիսի վերջերից այն վերանվանվեց «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե» կամ կարճ՝ «Ղարաբաղ կոմիտե»:*

[2] *Հետագայում «ազգերի ազատ ինքնորոշման իրավունք» ձևակերպումը տեղ գտավ 1988 թ. հունիսի 7-ի հանրահավաքում Լ. Տեր-Պետրոսյանի ներկայացրած ՀԽՍՀ ԳԽ-ի առաջարկվող որոշումների մասին խոսքում, հունիսի 12-ի հանրահավաքի որոշման մեջ («հարգել ամբողջ հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքը և ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկ. ՍՍՀ կազմի մեջ»), ապա և հունիսի 14-ին հանրապետական մամուլում հրապարակված ՀԽՍՀ ԳԽ ընդունելիք որոշման նախագծի մեջ:*

1988 թ. փետրվարյան հանրահավաքների սկզբում, մասնավորապես՝ ԼՂԻՄ մարզխորհրդի որոշման հրապարակումից անմիջապես հետո, Օպերայի հրապարակում հավաքվածները սկսեցին վանկարկել «պլե-նում, պլե-նում»՝ ակնկալելով Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի պլենումի հրավիրում: Սրա դրսևորումներից էր փետրվարի 20-ի «*Հայաստանի կոմկուսի կենտկոմ վե՛րջ տալ հանցագործ անտարբերությանը Ղարաբաղի հարցում*» ցուցապաստառը (նկ. 5): Սակայն շատ արագ ցուցարարների իսկ կողմից պահանջը հստակեցվեց, ու սկսեցին կանչել «սես-իա, սես-իա»՝ նկատի ունենալով հանրապետության օրենսդիր մարմնի՝ Գերագույն խորհրդի նստաշրջանի գումարումը: Սրա վկայություններից մեկն էլ «*Требуем внеочередную сессию*» ցուցապաստառն է (նկ. 2):

Մայիսի 26-ին սկսված ուսանողների նստացույցում (մետրո «Բաղրամյան» կայարանի վերգետնյա մասում, նաև Օպերայի հրապարակի աստիճաններին, Հովի. Թումանյանի արձանի պատվանդանի շուրջբոլորը) և հունիսի 4-ից սկսված հացադուլում (Օպերայի հրապարակ) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան անցկացնելու սահմանադրական պահանջը առկա էր տարբեր ձևակերպումներով, բայց և որոշակի տրամաբանությամբ: Նախ շեշտվում էր, թե որ մարմնին է պատկանում իշխանությունը երկրում (խորհուրդներ և դրանց ղեկավար մարմինը՝ Գերագույն խորհուրդ) (նկ. 6), առաջ էր քաշվում այդ մարմնի կողմից ընդունված հիմնարար փաստաթղթի (սահմանադրություն) դրույթների ԼՂԻՄ-ի հարցին սերտորեն առնչվողը (ազգերի ազատ ինքնորոշման իրավունք), մեջբերումներ էին արվում երկրի նախկին ու ներկա ղեկավարներից (Լենին – նկ. 7, Գորբաչով – նկ. 8), և միայն դրանից հետո առաջ էր քաշվում Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջան անցկացնելու անհրաժեշտությունը (նկ. 8):

Օպերայի հրապարակում մայիսի 26-ից անց էր կացվում ուսանողների նստացույց[1], իսկ հունիսի 4-ից՝ հացադուլ: Թե՝ նստացույցը, թե՛ հացադուլը, թե՛ հանրահավաքներն ուղեկցվում էին «սահմանադրություն» բառի գործածմամբ ստեղծված ցուցապաստառներով: Այսպես, «ներկա» էր յուրատեսակ «զաղափարախոսական քողի» դեր կատարող, իր բնույթով «ամենախորհրդային» և սահմանադրական «*Вся власть советам*» կարգախոսը. այն ցուցապաստառում

---

[1] *ԽՄԿԿ ԿԿ քարտուղարի անդամ, ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Եգոր Լիգաչովը Բաքվում, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի մայիսի 21-ին կայացած պլենումի ժամանակ հայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին տալու հարցը չի քննարկվել և չի քննարկվելու, և որ ոչ մի տարածքային փոփոխություններ չեն լինելու: Մայիսի 26-ին ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ուսանողները՝ ԼՂԻՄ-ից Ղարաբաղյան շարժման ակտիվ գործիչ, Ադրբեջանական ԽՍՀ վաստակավոր դերասանուհի Ժաննա Գալստյանի հետ հանդիպումից հետո որոշեցին դիմել անժամկետ նստացույցի, մինչև որ ԽՄԿԿ ԿԿ-ից չլինեն համապատասխան բացատրություններ Լիգաչովի հայտարարության կապակցությամբ, ապա և հավաստիացում, որ ԼՂԻՄ-ի հարցը օրակարգից չի հանված: Մայիսի 29-ին այս պահանջին ավելացավ ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի որոշմանն արձագանքելու նպատակով ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանի հրավիրման պահանջը: Տե՛ս* ***Արտյոնյան Վ. Բ.****, նշվ. աշխ., էջ 90: ИБ [Информационный бюллетень] N 4, էջ 15-16:*

բացականչական նշանով (նկ. 9), նաև փակցված էր Օպերայի հրապարակի արձաններից մեկի պատվանդանի վերնամասում՝ հարցական նշանով էր (նկ. 10)։ Վերջին դեպքում ցուցապաստառից քիչ ներքև ամրացված էր մեկ ուրիշ համառոտ, սակայն բովանդակալից տեքստ, ուր ասես ի մի էին բերված Ղարաբաղի հարցին առնչվող «ամենաուժեղ» գաղափարախոսական փաստարկները՝ մեկական բառով. «*Ղարաբաղ Karabagh Конституция Перестройка Горбачев!*» («Ղարաբաղ Սահմանադրություն Վերափոխում Գորբաչով»)։ Օպերայի շենքի աստիճաններին ուսանողների նստացույցն էր։ Այստեղ, ի թիվս տարբեր ցուցապաստառների, կար մեկը խիստ հստակ ձևակերպումով՝ «*Право наций на самоопределение*» (նկ. 11), իսկ Օպերայի շենքի պատուհաններին ամրացված տեքստերում նշված էր նստացուցավորների հիմնական պահանջը՝ «*Պահանջում ենք ՀՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանում քննարկել ՀՍՍՀի հետ ԼՂԻՄի վերամիավորման հարցը և տալ դրական լուծում*», «Требуем включить *в повестку дня сессии Верх. совета Арм. ССР вопрос о воссоединении* НКАО *с Арм. ССР*», «*Պահանջում ենք ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյից պաշտոնական հավաստիացում, որ Ղարաբաղի հարցը օրակարգում է*» (նկ. 12)։

Ալ. Սպենդիարյանի արձանի պատվանդանի մերձակայքում ընթացող նստացույցը ժամանակ անց վերաճեց հացադուլի։ Հացադուլավորների պահանջներն էին. «*ՀԿԿ Կենտկոմին / ՀՍՍՀ Գերագույն սովետին / Պահանջում ենք որպեսզի ՀՍՍՀ Գերագույն սովետի սեսիան օրակարգում դնի ԼՂԻՄ-ի մարզային սովետի սեսիայի որոշման քննարկումը և իր կողմից դրական որոշում ընդունի / Ի ցույց մեր պահանջի հայտարարում ենք / Հացադուլ*»[1], կից մեկ այլ մեծ թղթի վրա նշված էր, որ «*Հացադուլը սկսված է 11.00 ժ.-ին 4.06.88թ.*» (նկ. 13, 14)։ Պատվանդանի մյուս կողմում նույն պահանջներն էին[2], նաև գրված էին հացադուլավորների տվյալները։ Պատվանդանի մոտ դրված էր հացադուլավորներից Գառնիկ Մանասյանի[3] բաճկոնը՝ ԽՍՀՄ սոցիալիստական աշխատանքի հերոսի և Լենինի երկու շքանշաններով (նկ. 15, 16, 17)։

Մայիս-հունիսին Օպերայի հրապարակում ընթացող հանրահավաքներին գործածվող ցուցապաստառներից մեկի վրա կրկին հանդիպում է հղում

---

[1] *Մեծատառերով գրված տեքստում «և»-ը գրված էր փոքրատառով։*

[2] *Բառերից մեկում տառասխալ կար. գրված էր «սեսիա»։*

[3] *Պրն Մանասյանը (1930-2008) ծնունդով Վերին Անդ գյուղից էր (հետագայում այդտեղ կառուցվեց Քաջարան քաղաքը), վաղ հասակում կորցրել էր ծնողներին, շինարար էր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի (1979-1984), ապա և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ՀԽՍՀ (1978) և ԽՍՀՄ (1979) պետական մրցանակների դափնեկիր։ Նրա մասին մանրամասն տե՛ս* ***Порсугян А.****, По зову совести. – Промышленность, строительство и архитектура Армении, 1989, № 7, էջ 25-29։ Այստեղ անվանի շինարարը նշում է, որ իր կյանքի ամենաերջանիկ ժամանակը այն 13 օրերն էին, որ նա անց է կացրել Թատերական հրապարակում՝ հացադուլի ժամանակ։*

սահմանադրությանը. «*Решение областного совета и решение пленума*[1] *НКАО – это не эмоции – это Конституция, воля и разум целого народа*» (նկ. 9)։ Պաստառի տեքստը ԼՂԻՄ խորհրդային իշխանության և կոմկուսի ղեկավարության որոշումները ոչ թե պարզապես ֆիքսում է, այլ ներկայացնում է երկրի սահմանադրության համատեքստում, այսինքն, շեշտում է դրանց՝ օրենքի տառին համապատասխան լինելը։ Տեքստի մյուս կեսի բառերը նույնպես հատուկ իմաստ ունեին։ Բանն այն է, որ 1988 թ. մարտի 21-ին «Պրավդայում» լույս տեսավ «Эмоции и разум: О событиях в Нагорном Карабахе и вокруг него» հոդվածը, որտեղ փորձ էր արվում Շարժումը կապել ոչ վերակառուցողական ղեկավարության և կաշառակերության հետ։ Ցուցապաստառի հեղինակները, խաղարկելով «Պրավդայի» հոդվածի վերնագիրը և մեջբերելով ԼՂԻՄ իշխանությունների որոշումը, տրամագծորեն հակառակ եզրակացություն էին առաջարկում։

Վերն արդեն նշվեց, որ 1988 թ. հունիսի 4-ի հանրահավաքում խնդիր դրվեց հավաքել Գերագույն խորհրդի պատգամավորների առնվազն 1/3-ի միջնորդությունները նստաշրջան անցկացնելու մասին, ինչը և իրականացվեց մի քանի օրվա ընթացքում։ Դրան էր ուղղված նաև այդ օրերին ծնված «*Ты встретился со своим депутатом?*» գրությամբ պլակատը (նկ. 18)։ Պլակատի պատկերային մասը նույնությամբ կրկնում է 1920 թ. հունիսին ռուս նկարիչ, խորհրդային քաղաքական պլակատի հիմնադիրներից մեկի՝ Դմիտրի Մորի (Օռլով) ստեղծած հայտնի «*Ты записался добровольцем?*» բոլշևիկյան քարոզչական պլակատի կարմիր բուդյոնովկայով կարմիրբանակայինի պատկերը, որը, ցուցամատն ուղղելով դիտողի վրա, կոչ է անում նրան որպես կամավոր անդամագրվելու Կարմիր բանակի շարքերը[2]։

Այսպիսով, մայիսի վերջին – հունիսի սկզբին սկսված բողոքի զանգվածային դրսևորումներում (նստացույցեր, հացադուլ, հանրահավաքներ) գործ ունենք Ղարաբաղի հարցի վերաբերյալ ոչ թե զգացմունքային ձևակերպումների, այլ հստակ սահմանադրական բնույթ ունեցող պահանջների շուրջ գրագետ շարադրված տեքստերի հետ։ Անկախ այն հանգամանքից, թե ովքեր էին դրանց

---

[1] *1988 թ. մարտի 17-ի «Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումի» որոշմամբ արդեն մարզի կոմունիստների անունից դիմում էր հղվում ԽՄԿԿ ԿԿ-ին՝ խնդրելով քննարկել ու դրականորեն լուծել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու խնդիրը, ներկայացնելով հարցը որպես 20-րդ դարասկզբին տեղ գտած պատմական սխալ։ Մանրամասն տե՛ս* ***Арутюнян В. Б.****, նշվ. աշխ., էջ 60-61։*

[2] *Պլակատի նման լուծումով առաջին տարբերակը ստեղծվել է դեռևս 1914 թ. Մեծ Բրիտանիայում, զինվորական նախարար լորդ Քիթչընրի պատկերով։ Հետագայում այդ մոտիվն օգտագործվել է Առաջին համաշխարհայինում ներգրավված Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի համանման պլակատներում։ Տե՛ս* ***Maurice Rickards****, Posters of the First World War, NY, 1968, նկ. 6, 9-14։ Այս մոտիվն աշխարհում, նաև հետխորհրդային Հայաստանում ունեցավ բազմաթիվ զարգացումներ։*

հեղինակները[1], այդ տեքստերն այս կամ այն կերպ արտահայտում էին հարյուրավոր և հազարավոր քաղաքացիների ցանկություններն ու մտայնությունները, որոնք դրանցում արտահայտված գաղափարների կենսագործման համար դիմում էին օրեր ու շաբաթներ տևող անընդմեջ նստացույցերի և հացադուլների:

Հունիսի 15-ից սեպտեմբերի 21-ը ԼՂԻՄ-ում տեղ գտած իրադարձությունների հենքին հայտնվում են մի շարք պլակատներ ու ցուցապաստառներ սահմանադրության թեմայով: Այս անգամ դրանք շատ ավելի քննադատական բնույթ ունեին, քանի որ սահմանադրության կետերը կյանքի կոչելու գործի պատասխանատուները՝ ի դեմս միութենական և հանրապետական իշխանությունների, իրենց գործը չէին անում: Այսպես, «Конституция» բառի խաղարկումով (նկ. 19) շեշտվում էր, որ սահմանադրության կետերի իրագործումն իրականում մեկ մարդու կամքից է կախված, մեկ մարդու խոսքն է անցնում. սեպտեմբերի երկրորդ կեսի և հոկտեմբերի առաջին կեսի մի պլակատում «*Конституция*» բառի տասը տառերը հերթով վերանում են, և վերջում մնում է միայն «*Я*» տառը, որը նաև «Ես» է նշանակում: Բնութագրական է, որ այս պլակատի վրա «ституция» բառի առջևից ինչ-որ մեկը գրիչով ավելացրել էր «про»՝ այդ կերպ առաջարկելով սահմանադրության «*проституция*» որակումը, որը ժամանակ անց ամոթխածորեն ծածկվել էր թղթի կտորով (նկ. 20): Մեկ այլ «քույր» պլակատում պատկերված է բացված գիրք հիշեցնող մի բան, որի վերնագիրն է «*Конституц и Я*», գրքի առաջին իսկ էջին սրիչ է պատկերված, վրան մակագրված «Сделано Made in USSR» (նկ. 21), ասել է թե ԽՍՀՄ սահմանադրությունը ինչ-ինչ հարցեր լուծելու, միացնել-միավորելու փոխարեն սրիչի նման կտրում բաժանում է: Նույն ժամանակների մեկ այլ պլակատում խորհրդային երկու զինվոր զգաստ վիճակում, ուշի-ուշով, խիստ աչալուրջ պահպանում են ԽՍՀՄ սահմանադրությունը, քանի որ նրանից «*օգտվելը խստորեն արգելվում է*» (նկ. 22): Մոտավորապես նույն գաղափարն է ակնարկվում մի պլակատում, որտեղ «*Սահմանադրություն.*

---

[1] *«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանի դիտարկմամբ, «Շարժման ժամանակ մենք նաև տեսանք ժողովրդական ստեղծագործության ասեմ, թե նախաձեռնության՝ մի հսկայական դպրոց: Ամեն անգամ մենք՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներս, գալիս էինք Ազատության հրապարակ և զարմանում: Դա մի հսկայական բացօթյա ցուցահանդես էր: Ամբողջ հրապարակի շուրջ ցուցատախտակներ էին, դրանց վրա պատկերներ, և կարելի էր զարմանալ մեր ժողովրդի սրամտության, ճաշակի, էսթետիկայի վրա: Գրվում էին բանաստեղծություններ. ցանկացած մեկը բանաստեղծություն էր գրում, փակցնում այդ ցուցատախտակներին, փակցվում էին նաև լուսանկարների հրաշալի շարքեր: Մենք անգամ չէինք ճանաչում այն մարդկանց, ովքեր դա անում էին: Յուրաքանչյուր մարդ իրեն զգում էր ոչ թե որպես հանդիսատես, որ գալիս է հրապարակ թատրոն դիտելու, այլ այդ պրոցեսի ուղղակի մասնակից: Մեզնից ոչնչով չէին տարբերվում. համարձակության, քաջության տեսակետից նրանք գուցե ավելի խիզախ էին»: Տե՛ս «... Ես ընդամենը ձեր գործիքն եմ...». Երիտասարդությանը ասում է ՀՀ առաջին նախագահը (3 նոյեմբերի 2011 թ.), http://www. levonpresident.am/?catID=20&contID=87: Անձնական զրույցներում նմանատիպ կարծիքներ են հայտնել «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամներ նս:*

հիմնական օրենք» վերնագրով գիրքը կողպեքով փակված է, տակն էլ մակագրված է «*Առանց խոսքի*» (նկ. 23)։ Թերևս այդ պատճառով էլ մեկ ուրիշ պլակատում սահմանադրությունը պատկերված է սարդոստայնով, այսինքն, այն փակի տակ է եղել, վաղուց չեն օգտագործել։ Սակայն հենց փորձում են օգտագործել կամ, այլ կերպ ասած, «մուտք են գործում սահմանադրական տիրույթ», այն մարդուց-քաղաքացուց վերցնում է բառացիորեն ամեն ինչ, նրան ուղղակի մերկ է թողնում (նկ. 24)։ Նշվածը, մեկ այլ պլակատի մեկնաբանությամբ պարզապես նշանակում է, որ «*Սահմանադրությունն*» իրականում փուչիկի նման դատարկ «*Բռնապետության*» համար դիմակ է ծառայում (նկ. 25)։ Աշնանային պլակատներից մեկում սահմանադրությունը համեմատվում է խրտվիլակի հետ, որը պահպանում է փշալարեր ունեցող սահմանը (թերևս ակնարկելով Հայաստանի ու ԼՂԻՄ-ի տարանջատումը) (նկ. 26)։ Սահմանադրության կենսագործումը, ըստ մեկ այլ պլակատի տրամաբանությամբ, հենված է լոկ զինվորական ու ոստիկանական ուժի վրա. «*Սահմանադրություն*» վերնագրով գրքի կազմերեսին պատկերված են տանկ և գուրզի նմանողությամբ մահակ, որպես հրատարակության թիվ նշված է 1988-ը (նկ. 27)։ Պլակատներից մեկի վրա էլ նկարված է կարմիր, «*Սահմանադրություն*» մակագրությամբ լաթով բերանը փակված երիտասարդ, ասել է թե՝ սահմանադրության կետերով են փորձում ազատատենչ մարդու բերանը փակել, կամ էլ թե՝ սահմանադրությունն այնպիսին է, որ թույլ չի տալիս, որ երիտասարդներն ազատորեն արտահայտվեն (նկ. 28)։ Այստեղից էլ արվում է տրամաբանական եզրակացություն. «*Սահմանադրությունն*» այնքան անպետք մի բան է, որ կարելի է զուգարան նետել և ջուրը քաշել (նկ. 29), և որ «*Կորել է ՍՍՀՄ Սահմանադրությունը. համարել անվավեր*» (նկ. 30), այսինքն՝ հույս չկա այն վերագտնելու, ուստի և այն օգտագործման ենթակա չէ։ Մեկ այլ պլակատում, Կրեմլից հեռախոսազանգով եկած կարգադրության համաձայն, հայաստանյան իշխանությունները փորձում են ոտնահարել «*ՀՍՍՀ Սահմանադրությունը (Օրենք)*»-ը (նկ. 31)։ Ավելի ուշ թերևս հանրահավաքների մասնակիցներից մեկը գրիչով մակագրել է «*Неправильно набран номер*», ասել է թե Մոսկվայի կարգադրությունները Հայաստանում չեն գործում։ Պլակատներից մեկն էլ մեջբերում է ԽՍՀՄ սահմանադրության հայոց համար կարևորագույն երկու հոդվածները՝ 70-րդն ու 78-րդը։ Ըստ 70 «կետի», «*ՍՍՀՄ-ը միութենական բազմազգ պետություն է՝ կազմավորված ազգերի ազատ ինքնորոշման և իրավահավասար ՍՍՀ-ների կամավոր միավորման հետևանքով*», ըստ 78 «կետի»՝ «*Միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ, որը ենթակա է ՍՍՀ Միության հաստատմանը*»։ 70-րդ կետի ներքո պատկերված են խաղաղ ցուցարարներ, 78-ի տակ՝ տանկեր։ Վերևում հավերժ հակասական Գորբաչովն է, որն իր խոսքում հենվում է և՛ 70-րդ, և՛ 78-րդ կետերին (նկ. 32)։ Բայց և այնպես սահմանադրական պայքարը պետք է շարունակել, ինչին էլ նվիրված էր

սեպտեմբեր-հոկտեմբերյան «*Ազգերի ինքնորոշման դրոշի ներքո պայքար մինչև հաղթանակ*» (նկ. 19) ցուցապաստառը:

Նոյեմբերի 7-ի շքերթին պլակատների բույլ էր: Դրանցից մի քանիսը վերստին անդրադառնում էին սահմանադրության 70-րդ հոդվածում ամրագրված ինքնորոշման իրավունքին: Խորհրդային շքերթների ժամանակ օրվա խորհրդին բնորոշ կարգախոսները սովորաբար ամրացնում էին «ԵրԱԶ» (կամ նման դասի) ավտոմեքենայի վրա հավաքված պատվանդանին (նկ. 33): Այս անգամ եռագույն դրոշով պատված նման մի պատվանդանի ճակատին գրված էր «*Արցախ / Միացում / ՀՀՇ / Սահմանադրական խմբերի միություն*»: Սա Հայոց համազգային շարժման այն կազմակերպական միավորն էր, որը, մասնավորապես, զբաղվում էր պատգամավորների հետ տարվող աշխատանքով: Պատվանդանի մի կողին ամրացված էր սահմանադրության տառին և ոգուն համապատասխան ցուցապաստառ՝ «*Ժողովրդի կամքը օրենք է, ազգին՝ ինքնորոշում*»: Սրանից ներքև ամրացված էին երկու այլ կարգախոսներ. «*Ողջո՞ւն, Արցախ*» և «*Կեցցե՞ վերակառուցման անդրանիկ զավակ ազատագրված Արցախը*»՝ այս կերպ դիտողներին հուշելով, որ ինքնորոշման խնդիրը վերաբերում է Արցախի ժողովրդին: Շքերթների ժամանակ, որպես կանոն, փողոցներում կանգնում էին նաև հասարակական կարգը վերահսկող միլիցիոներներ և դրուժիննիկներ (ժողովրդական միլիցիայի անդամներ): Բնութագրական է, որ այս անգամ ևս ճանապարհի եզրին կանգնած երիտասարդը, ժողովրդական դրուժիննիկի նմանողությամբ, նույնպես ձեռքին թևկապ է ամրացրել, սակայն այն եռագույն է, ինչը մեր համոզմամբ՝ Հայաստանում այդ օրերին արդեն միս ու արյուն ստացած երկիշխանության վկայություններից է: Որպես այդ իրողության վկայություն կարելի է գնահատել նաև հետևյալ ցուցապաստառը. «*Հանրապետության սուվերենությունը ապահովեք սահմանադրությամբ*» (նկ. 34):

Մեկ այլ ցուցապաստառ, ուղղակիորեն անդրադառնալով օրվա խորհրդին, այն մեկնաբանում էր որոշակի շեշտադրումով՝ «*Главный смысл Октября это самоопределения*[1] *нации*» (նկ. 35): Մեկ այլ ցուցապաստառում նախորդ միտքը ավելի հստակ էր ներկայացվում. «*Ճանաչել Արցախի ինքնորոշման իրավունքը*» (նկ. 36, 37): Մեկ ուրիշ պաստառ նույնպես Արցախի հարցը հստակ կապում էր սահմանադրության հետ. «*Սահմանադրության շրջանակում հասնել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծմանը.*» (նկ. 38): Եվս մեկ ուրիշը ամրագրում էր նույն միտքը քիչ այլ ձևակերպմամբ. «*Ինքնորոշումը Ղարաբաղի սահմանադրական իրավունքն է*» (նկ. 39): Եվս մեկը, հարցն ավելի պարզորոշ ներկայացնելու համար, տեքստը կազմել էր համեմատության եղանակով. «*Ազգերի ազատ ինքնորոշու՞մ, թե բռնի միաձուլումբ*», գրության կողքին էլ ձեռնաշղթաներ

---

[1] *Պետք է լինի «самоопределение наций»:*

[2] *Ենթադրում եմ, որ ցուցապաստառի հեղինակը պետք է գործածեր «միավորում» բառը՝ նկատի ունենալով Ղարաբաղի հայության՝ Ադրբեջանի կազմում բռնի ուժով պահելու իրողությունը:*

էին նկարված՝ այս կերպ ավելի առարկայորեն ցույց տալով արցախահայությանը բռնությամբ Ադրբեջանի կազմում պահելու հանգամանքը (նկ. 40)։ Հաջորդ օրը՝ նոյեմբերի 8-ին, տասնյակ հազարավոր մարդիկ, ցուցապաստառներ պարզած, գնացին «Հրազդան» ստադիոն՝ դիտելու «Արարատ»–«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմերի ընկերական հանդիպումը։ Այդ օրը լուսանկարչի խցիկը ֆիքսել է ևս մեկ պաստառ, ուր անդրադարձ կա սահմանադրության դիտարկվող դրույթներին. «*Բավարարել Արցախի ինքնորոշման իրավունքը / սահմանադրական սուվերենություն Հ*[ՍՍՀ-ին] / *Ճանաչել Մ*[ումգայիթի] ցեղասպա[նությունը]» (նկ. 41)։ Նոյեմբերի 7-8-ի ցուցապաստառներից մեկն էլ շատ դիպուկ բնութագրում էր առաջարկում սահմանադրության մեջ նախատեսվող փոփոխությունների փաթեթին. «*Ներկա* ան*սահմանադրություն, թե՞ նոր սահմանա*փ*ակության նախագիծ*» (նկ. 42)։ Մեկ այլ պլակատ՝ ղարաբաղցի երկարակյացների արձանի խորհրդանիշ դարձած պատկերով, ուղղակիորեն առաջարկում էր «Մերժել *Սահմանադրության նախագիծը*» (նկ. 43)։

Վերջապես մի ցուցապաստառ էլ նոյեմբերի 18-ին առաջարկում էր այն պարզագույն սահմանադրական լուծումը, որն ընդունված է ողջ քաղաքակիրթ աշխարհում.[1] «*ՄԱԿ-ի հովանավորությամբ հանրաքվե*» (նկ. 44)։ Բնութագրական է, որ եթե հունիսի 10-ին ֆիքսված ցուցապաստառում (նկ. 7) հանրաքվեի հարցը բարձրացվում էր խորհրդային ամենամեծ հեղինակության՝ Վլադիմիր Լենինի համապատասխան աշխատությանը հղում անելով, ապա ընդամենը հինգ ամիս անց «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն» մեծադղորդ անվանումով իրադարձության 71-րդ տոնակատարության նշման ո՛չ օրը, ո՛չ էլ ամսվա ընթացքում այդ հեղափոխության առաջնորդ համարվող անձնավորության անունը ոչ մի ձևով չէր նշվում։ Փոխարենը, որպես անաչառ մարմին, մեջտեղ է գալիս ոչ-խորհրդային, այլ միջազգային ինստիտուտ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը։ Սա ևս ժողովրդական տրամադրությունների փոփոխության ցուցիչներից է։

Նկատենք, որ սահմանադրությամբ նախատեսված հանրաքվեին դիմելու անհրաժեշտությունը մատնացույց էր արվում նաև ավելի վաղ։ Եթե 1988 թ. փետրվարյան հարյուրհազարանոց հանրահավաքների ժամանակ Ազգային

«Միաձուլում»-ը թերևս «ասիմիլյացիա»-ին համարժեք հասկացություն է, մի բան, որ ԼՂԻՄ-ի հայությանը չէր սպառնում։

[1] *Նման հնարավորություն էր ընձեռում նաև ԽՍՀՄ սահմանադրությունը հոդված 5-ի միջոցով. «Պետական կյանքի առավել կարևոր հարցերը հանձնվում են համաժողովրդական քննարկման, ինչպես նաև դրվում համաժողովրդական քվեարկության (ռեֆերենդում)»։ Սովետական սոցիալիստական հանրապետությունների միության Սահմանադրություն (հիմնական օրենք), էջ 8։ Չնայած նման հոդվածի առկայությանը, լայնածավալ վերափոխումների քաղաքականություն հռչակած ԽՄԿԿ-ն 1985-1991 թթ. ոչ մի անգամ չօգտվեց հանրաքվեով խրթին հարցերը լուծելու հնարավորությունից։ Փոխարենը մեջտեղ բերվեց «перестройка не перекройка [границ]» («վերափոխումը [սահմանների] վերաձևում չէ») քարոզչական ձևակերպումը՝ այդպիսով փաստորեն փակելով ներպետական սահմանների հնարավոր փոփոխությունների հարցերը։*

ինքնորոշում միավորման անկախության կոչերը[1] միանշանակ մերժվում էին, ապա արդեն հուլիսի երկրորդ կեսին-օգոստոսին (այն է՝ հուլիսի 18-ի ԽՍՀՄ ԳԽ նիստից հետո) անկախության կոչող ցուցապաստառներն իրենց մշտական տեղն ունեին Օպերայի հրապարակում՝ Ալ. Սպենդիարյանի արձանի ձախ թևի կողմից, Օպերայի շինության անկյունային պատին: Եվ կրկին շեշտենք, որ այդ կոչերը հաճախ հղում էին անում երկրի հիմնական օրենքին[2]: Դա ունի իր պատճառաբանությունը. բանն այն է, որ 1976 թ-ից ի վեր Ազգային միացյալ կուսակցության (հետագայում՝ ԱԻՄ) ծրագրի «Նպատակները և առաջնահերթ խնդիրը» բաժնում հստակ գրված էր, որ կազմակերպությունը խնդիր է դնում հասնել Հայաստանի անկախությանը ԽՍՀՄ սահմանադրության 17-րդ հոդվածով նախատեսվող հանրաքվեի միջոցով, որի համաձայն՝ յուրաքանչյուր միութենական հանրապետություն իրավունք ունի ազատորեն դուրս գալ ՍՍՀՄ կազմից[3]: 1988 թ. հուլիս-օգոստոսյան ցուցապաստառներին մասնավորապես գրված էր. «*Անկախություն հանրաքվեի միջոցով*» (նկ. 45, 46), ինչպես նաև ավելի կտրուկ՝ «*Անջատում ԽՍՀՄ-ից*», սակայն որոշակի պարզաբանմամբ՝ «*Արցախը Հայաստանին վերամիավորման ճանապարհը Հայաստանի անկախացումն է*» (նկ. 46): Նոյեմբերի 7-ին այդ նույն տեղում ամրացված ցուցապաստառները գրեթե նույն բանն էին ասում, սակայն քիչ այլ ձևակերպումներով. «*Հայաստանի անկախացում հանրաքվեի միջոցով*», «*Հայաստանի փրկությունը իր շուտափույթ անկախության մեջ է. Պ. Հայրիկյան*», «*Կեցցե ազատ ու անկախ Հայաստանը*» (նկ. 47): Պարույր Հայրիկյանին Հայաստան վերադարձնելու պահանջով 1990 թ. ապրիլյան պաստառների շարքի մի ցուցապաստառի տեքստը կոչ էր անում «*Ազգային պետականության վերականգնում հանրաքվեի միջոցով*» (նկ. 48): Ինչպես տեսնում ենք, անկախության կոչերն արվում էին երկրի սահմանադրությամբ նախատեսված իրավունքների շրջանակներում:

Վերը նշեցինք, որ 1988 թ. նոյեմբերի 24-ին Օպերայի թատրոնի շենքում շարունակվեց նոյեմբերի 23-ին ընդհատված ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանը, որը մերժեց ԽՍՀՄ-ում ընտրությունների անցկացման նոր օրինագիծը և ԽՍՀՄ սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հրամանագրի ընդունումը: Եվ անմիջապես նույն երեկոյան ծնվեց ԽՍՀՄ խորհրդարանի բնութագրմանը նվիրված մի ուշագրավ պլակատ (լուս. 49): Այն վերնագրված էր «*Совет народных депутатов*». միութենական «Իզվեստիա» թերթի (որը համարվում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի օրգան) վերնագրային հատվածի տառատեսակով կազմված այդ գրությունն ամրացված էր «*Государственный академический*

---

[1] *Հարցի շուրջ տե՛ս նաև **Մարության Հարություն**, Հայ ինքնության պատկերագրությունը, էջ 266-269, 363 (ծանոթագրություն 13):*

[2] *2013 թ. օգոստոսին ԱԻՄ-ը նշեց «Անկախություն հանրաքվեի ճանապարհով» ծրագրի որդեգրման 40-ամյակը:*

[3] *Մանրամասն տե՛ս **Հայրիկեան Պարոյր**, Ազատութեան ճանապարհի բանտերում (իմ բանտային յուշերից), գիրք Բ, 1974-1977, Երեւան, 2017, էջ 417-419:*

центральный театр кукол»-ի («Պետական ակադեմիական կենտրոնական տիկնիկային թատրոն»[1]) ամենահայտնի և սիրված ներկայացման՝ «Необыкновенный концерт»[2] տիկնիկների պատկերներով հայտագրի վրա: Այն երգիծանքի ոճով բեմադրված ներկայացում է (երկրորդ, էապես փոխված ձևաչափով բեմադրվում էր 1968 թվականից, հեռուստատեսությամբ ցուցադրվում էր 1972 թվականից ի վեր), որտեղ տիկնիկները ծաղրանմանակումներ են անում տարբեր ոճերին պատկանող արտիստների կատարումների վրա. այստեղ երգիչ-երգչուհիներ են, պարողներ և երաժիշտներ, կրկեսային վարժեցնողներ և աճպարարներ: Ներկայացումը վարում է տիկնիկ-ելույթավար Էդուարդ Ապլոմբովը[3] (նրա ինքնավստահ կերպարն առանձնանում է պլակատում նույնպես), որն այդ տարիներին խոսում էր սիրված դերասան Զինովի Գերդտի ձայնով: Ելույթավարը, որպես կերպար, սիրում է ծափահարություններ, անկրկնելի է ու հմայիչ սակայն «պետք չէ հավատալ նրա խոսքին»[4]: Տիկնիկներին պատկերների մի մասի վրա ամրացված էին գրություններ «հերոսների» երևակայական, սակայն թերևս ինչ-որ բան հուշելու փորձ անող անուններով՝ «Щерб» («Շչերբ[իցկի]»), «Вася депутат» («Պատգամավոր Վասյա»), «Аман» («Աման»), «Лиг» («Լիգ[աչո՞վ]), «Ра» («Ռա[իսա՞]»[5]), «Шев» («Շեվ[արդնաձե]»): Պլակատի միջոցով փոխանցվող իմաստն թերևս այն էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերն իրականում տիկնիկային, այսինքն՝ կառավարվող թատրոնի նմանությամբ բեմադրություններ են: Հիշեցնենք, որ նույն գիշեր Երևանում մտցվում է հատուկ դրություն և պարետային ժամ, իսկ ժողովրդական դարձած խորհրդարանի որոշումները ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները հայտարարում են հակասահմանադրական ու ապօրինի:

Գորբաչովի ձեռքում կենտրոնացվել էր հսկայական իշխանություն: Մյուս կողմից, վերակառուցման տարիներին խորհրդային քաղաքացիները շատ հաճախ հեռուստացույցով ականատեսն էին լինում երկրի ղեկավարի խոսքուզրույցին՝ նաև այդ կերպ պատկերացում կազմելով նրա աշխատառճի մասին, որը թվացյալ դեմոկրատական պահվածքի ներքո իրականում իր խոսքն առաջ տանելու, իր կամքը թելադրելու, միանձնյա որոշումներ կայացնելու բազմաթիվ օրինակներ էր առաջարկում: Գորբաչովի օգտագործած ձևակերպումները ոչ քիչ դեպքերում «թևավոր» խոսքի կարգավիճակ էին ձեռք բերում, հիմք դառնում անեկդոտների և

---

[1] *1993 թ. կրում է իր հիմնադրի՝ Սերգեյ Օբրազցովի անունը:*

[2] *Այդ բեմադրությունը ներկայացվել է ավելի քան 10.000 անգամ և ներկայումս համարվում է ընդհանրապես 20-րդ դարի ամենահայտնի ներկայացումը, որպես այդպիսին գրանցված է Գինեսի ռեկորդների գրքում:*

[3] *«Ապլոմբ» ֆրանսերեն բառ է, նշանակում է «վարքի և խոսքի մեջ դրսևորվող ավելորդ ինքնավստահություն»ն: Տե՛ս Словарь иностранных слов (18-е издание), М., 1989, էջ 48:*

[4] https://puppet.ru/repertuar/neobyknovennyy_kontsert

[5] *Գուցե պլակատի հեղինակը նկատի ուներ Ռահսա Մաքսիմովնային՝ Միխայիլ Գորբաչովի կնոջը, որը նույնպես աչքի էր ընկնում ինքնավստահ պահվածքով, և ընտրական նոր օրենսգրքի համաձայն կարող էր ընտրվել ժողովրդական պատգամավոր:*

զվարճախոսությունների: Երկրի ղեկավարի խոսքում, մասնավորապես, հաճախ էր օգտագործվում «Мы тут посоветовались» արտահայտությունը, որը բերվում էր որպես կոլեգիալ որոշման հիմնավորում, համենայն դեպս՝ նման պատրանք էր ստեղծում: Ռուսերենում կա նման դարձվածք «Вот мы тут посоветовались, и Я решил!», որը մեկնաբանվում է որպես հարցի դեմոկրատական քննարկման ցուցադրությամբ քողարկված՝ անձնասիրության, միանձնյա ղեկավարության դրսևորում[1]: Այս ձևակերպումը (փոքր-ինչ այլ տարբերակով՝ «*Я тут посоветовались и*») հիմք էր ծառայել պրոֆեսիոնալ նկարչին ստեղծելու մի պլակատ, որը ցուցադրվեց 1989 թ. նոյեմբերի 4-5-ին ՀՀՇ-ի առաջին համագումարի ժամանակ բացված պլակատների ցուցահանդեսի ժամանակ (նկ. 50): Պլակատում կարմիր գույնով «Я»-ն (այստեղ՝ «Ես», օգտագործվում է որպես դերանուն) գերիշխում է «*партия*», «*сессия*», «*демократия*», «*конституция*» բառ-երևույթներում: Որ դրանք թվարկվածներով չեն սահմանափակվում, երևում է բազմակետերից: Այդ ցուցահանդեսի ժամանակ կար մեկ այլ նման պլակատ (նկ. 51), որում չնայած բացակայում էին սահմանադրության թեման և Գորբաչովի անձը, սակայն ակնարկը խիստ թափանցիկ էր: Պլակատի ստեղծման համար հիմք էր ծառայել Ռոբերտ Ռոժդեստվենսկու «Родина моя» բանաստեղծությունը, որի սկիզբը և կրկներգը պարունակում են «Я, ты, он, она / Вместе – целая страна» տողերը: Բանաստեղծության հիման վրա գրված հայրենասիրական այդ երգը 1970-ականներից ի վեր, հատկապես սիրված երգչուհի Սոֆիա Ռոտարուի կատարմամբ, հաճախ էր հնչում ռադիոյով ու հեռուստատեսությամբ, ու, մասնավորապես, ուղեկցում էր կոմկուսի համագումարների և խորհուրդների նստաշրջանների բազմամարդ հավաքույթները: Պլակատի առանցքը, սակայն, «*Я*» (Ես) դերանունն է, որի շուրջը պտտվում են «դու, նա»-ն, նաև ողջ երկիրը: Նկատենք, որ այդ ցուցահանդեսին ներկայացված էին ևս մի քանի պլակատներ, որոնց գլխավոր հերոսը կրկին երկրի ղեկավարն էր:

Ղարաբաղյան շարժման ժամանակ առաջ քաշված խնդիրների լուծմանն ուղղված սահմանադրական պայքարի տրամաբանական արդյունքը 1990 թ. մայիսի-հունիսի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններն էին: Դրանց շնորհիվ ձևավորվեց նոր՝ ժողովրդի մեծամասնության վստահությունը վայելող խորհրդարան, որի առաջին նստաշրջանը օգոստոսի 23-ին ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», ինչով, մեր համոզմամբ, ավարտվեց Ղարաբաղյան համաժողովրդական շարժումը և սկիզբ դրվեց անկախ պետականության հաստատման գործընթացին: Ելնելով՝ Հայաստանի անկախության մասին Հռչակագրի դրույթներից ու նպատակներից՝ 1991 թ. մարտի 1-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց նույն թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետությունում անցկացնել ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե: 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն

[1] ***Белко В. К.,*** *Жгучий глагол: Словарь народной фразеологии. М., 2000.*

խորհուրդը, հիմնվելով հանրաքվեի արդյունքների վրա (ընտրողների 95%-ի 99.5%-ը քվեարկեց հօգուտ անկախության), ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին որոշում:

Մեր համոզմամբ, վերոբերյալ վերլուծությունից պարզորոշ երևում է, որ Ղարաբաղյան շարժումը սկզբից ևեթ որդեգրել էր պայքարի սահմանադրական եղանակը, ինչն էլ դարձավ հաջողության կարևորագույն գրավականներից մեկը: Ուստի բնավ պատահական չէր, որ սահմանադրության թեմային վերաբերող ցուցապաստառների տեքստերը Շարժման հայելին էին. որոշ դեպքերում դրանք ուղղակիորեն, թերևս մի քիչ յուրովի վերաշարադրում էին հանրահավաքներում հնչող քաղաքական տեքստերը, մի շարք դեպքերում էլ նրանցում երևում է դրանք կերտողների առանձնահատուկ, նաև պատկերային մտածողությունը՝ արվում են հետաքրքիր համեմատություններ, ստեղծվում են նոր բառեր, մեջբերվում են հայտնի բանաձևեր՝ սակայն նոր շեշտադրումներով, առաջարկվում են անսովոր լուծումներ: Սահմանադրության թեմային վերաբերող տեքստերը նաև վկայությունն են այն բանի, որ Ղարաբաղյան շարժումն իր առջև դրված խնդիրների որոշ մասով համահունչ էր ժողովրդավարական վերափոխումներին ուղղված ընդհանուր խորհրդային բողոքի դրսևորումներին: Ժողովրդի միտքը միշտ աշխատում է, պարզապես հաճախ այն յուրովի է մեկնաբանում հայտնի իրողությունները, հումորով նայում լուրջ երևույթներին, դիտողների մեջ ժպիտ կամ ծիծաղ առաջացնելով՝ քաղաքականապես կրթում է նրանց, առաջարկում նոր համոզմունքներ, իրականացնում անբռնազբոս քարոզչություն, ձևավորում աշխարհայացքային նոր տարրեր, հանում է մարդկանց միջից խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված վախը, մղում համարձակ քայլերի:

Նկ.1

Նկ.2

Նկ.3

Նկ.4

Նկ.5

Նկ.6



Նկ.7

Նկ.8



Նկ.9

Նկ.10

Նկ.11



Նկ.12

Նկ.13 Նկ.14

Նկ.15 Նկ.16

Նկ.17

Նկ.18

Նկ.19

Նկ.22

Նկ.21 Նկ.22

Նկ.23



Նկ.24



Նկ.25

Նկ.26

Նկ.27

Նկ.28

Նկ.29

Նկ.30



Նկ.31

Նկ.32

Նկ.33

Նկ.34

Նկ.35

Նկ.36

Նկ.37

Նկ.38

Նկ.39

Նկ.40

Նկ.41

Նկ.42

Նկ.43

Նկ.44

Նկ.45

Նկ.46

Նկ.47

Նկ.48

Նկ.49

Նկ.50

Նկ.51

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: